ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2010 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ

Բանկի Վարչության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Բանկի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

Բանկի Վարչության անդամներ.

Աշոտ Օսիպյան	Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն		11.05.10թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արթուր Հակոբյան	Վարչության նախագահի առաջին տեղակալ, Գործադիր տնօրենի առաջին տեղակալ		11.05.10թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Դավիթ Հարությունյան	Վարչության նախագահի տեղակալ, Գործադիր տնօրենի տեղակալ		11.05.10թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Տիգրան Գալստյան	Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ		11.05.10թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Գարիկ Ադամյան	Վարչության անդամ, Ռազմավարության և մեթոդոլոգիայի վարչության պետ		11.05.10թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արթուր Մելիքյան	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ		11.05.10թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՁԵԿՈՒՅՑԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կառավարման մարմինների միջանկյալ սույն զեկույցը ներկայացնում է՝

- Բանկի բիզնեսի արդյունքերի և զարգացման իրական պատկերի նկարագիրը,
- կարևոր դեպքերի նկարագիրը,
- Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:

Ակտիվներ

Հաշվետու միջանկյալ ժամանակաշրջանի ավարտին Բանկի ակտիվները կազմել են 41,149,741 հազ. դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 13,179,701 հազ. ՀՀ դրամով կամ 47.1%-ով, իսկ 31.12.09թ.-ի համեմատ նվազել են 2,316,268 հազ. ՀՀ դրամով կամ 5.3%-ով:

Նշված ժամանակահատվածների համեմատ հաշվետու եռամսյակի ակտիվների մեծության փոփոխությունները բնորոշ են ֆինանսական տարվա այդ ժամանակահատվածի գործարար ակտիվությանը:

2010 թվականի 1-ին եռամսյակի ավարտին, նախորդ տարվա 1-ին եռամսյակի համեմատ, Բանկի ակտիվների աճը հիմնականում պայմանավորված է եղել կանխիկ դրամական միջոցների և ՀՀ կենտրոնական բանկում հաշվի մնացորդների՝ 5,664,245 հազ. ՀՀ դրամ կամ 80.1%, և հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների՝ 7,425,563 հազ. ՀՀ դրամ կամ 64.9%, ինչպես նաև բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների (1,274,583 հազ. դրամ) աճով: Նախորդ տարվա տարեվերջի համեմատ, Բանկի ակտիվների նվազումը հիմնականում պայմանավորված է եղել կանխիկ դրամական միջոցների և ՀՀ կենտրոնական բանկում հաշվի մնացորդների՝ 3,533,074 հազ. ՀՀ դրամ կամ 21.7%, և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ 2,018,643 հազ. ՀՀ դրամով կամ 41.0%-ով, նվազմամբ:

Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ

Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին հաճախորդներին տրված վարկերի և այլ փոխատվությունների մնացորդները կազմել են 18,871,838 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 7,425,563 հազ. ՀՀ դրամով կամ 64.9%-ով, իսկ 31.12.09թ.-ի համեմատ՝ 2,775,648 հազ. ՀՀ դրամով կամ 17.2%-ով:

2010թ. 1-ին եռամսյակում Բանկի կողմից տրամադրված վարկերի աճը պայմանավորված է ՀՀ տնտեսության որոշակի ակտիվացմամբ և որպես հետևանք՝ գործող և նոր հաճախորդների կողմից ֆինանսական միջոցների հանդեպ սպառողական և բիզնես վարկավորման հիման վրա առաջացած պահանջմունքով:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տրամադրվել է 8,533,356 հազ. ՀՀ դրամի վարկ, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ընթացքում՝ 4,679,497 հազ. ՀՀ դրամ:

Բանկի տրամադրած վարկերը սպասարկվում են պայմանագրերին համապատասխան և գերակշռող մասը դասակարգված են որպես ստանդարտ վարկեր: Այս ցուցանիշը վկայում է վարկային ռիսկի կառավարման բարձր մակարդակի մասին:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Հաշվետու ժամանակահատվածի ավարտին Բանկի վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների մնացորդները կազմել են 2,904,538 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 806,928 հազ. ՀՀ դրամով կամ 38.5%-ով, իսկ 31.12.09թ. համեմատ նվազել է 2,018,643 հազ. ՀՀ դրամով կամ 41.0%-ով:

31.12.09թ.-ի համեմատ, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների նվազումը պայմանավորված է «Իզմիրլյան» ՈՎԿ դուստր ընկերության լուծարմամբ (նվազեցվող գումարը՝ 2,012,779 հազ. ՀՀ դրամ):

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկի կողմից պետական արժեթղթերով կատարված գործառնությունների ծավալը կազմել է 17,394,492 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 6,373,506 հազ. ՀՀ դրամի դիմաց:

Արտարժութային գործառնություններ

Հաշվետու ժամանակահատվածում Բանկի արտարժութային գործառնությունների ծավալներն ըստ արտարժույթների կազմել են.

ԱՄՆ դոլարով գործարքների ծավալը՝ 142,459.8 հազ. ԱՄՆ դոլար,

ՌԴ ռուբլով գործարքների ծավալը՝ 413,917.9 հազ. ՌԴ ռուբլի,

Եվրո գործարքների ծավալը՝ 60,845.2 հազ. եվրո:

Վերը նշված արտարժութային գործառնությունների արդյունքում, հաշվետու ժամանակահատվածում արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտը կազմել է 81,222 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 48,748 հազ. ՀՀ դրամի դիմաց: Արձանագրված աճը պայմանավորված է նախորդ տարվա համեմատ արտարժութային գործառնությունների շուկայում գործարքների ծավալների և տնտեսական ակտիվության աճով:

Պարտավորություններ և Կապիտալ

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի պասիվների աճը (13,179,701 հազ. ՀՀ դրամով կամ 47.1%-ով) պայմանավորված է պարտավորությունների՝ (12,629,577 հազ. ՀՀ դրամով կամ 62.1%-ով) և ընդհանուր կապիտալի (550,124 հազ. ՀՀ դրամով կամ 7.2%-ով) աճով:

Պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորված է հաճախորդների նկատմամբ պարտավորությունների աճով, որը կազմել է 12,830,763 հազ. ՀՀ դրամ կամ 102.2%: Ընդ որում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդների մնացորդներն աճել են 1,971,427 հազ. ՀՀ դրամով կամ 45.9%-ով:

31.12.09թ.-ի համեմատ, Բանկի պասիվները նվազել են 2,316,268 հազ. ՀՀ դրամով կամ 5.3%-ով, ինչը պայմանավորված է պարտավորությունների (2,549,081 հազ. ՀՀ դրամով կամ 7.2%-ով) նվազմամբ: Միևնույն ժամանակ, Բանկի ընդհանուր կապիտալն աճել է 232,813 հազ. ՀՀ դրամով կամ 2.9%-ով:

Պարտավորությունների նվազումը հիմնականում պայմանավորված է բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների նվազմամբ, որը կազմել է 2,306,650 հազ. ՀՀ դրամ կամ 24.5%:

Ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդների մնացորդներն աճել են 2,552,743 հազ. ՀՀ դրամով կամ 68.7%-ով՝ կազմելով 6,268,061 հազ. ՀՀ դրամ:

Կապիտալ

Հաշվետու եռամսյակում Բանկի ընդհանուր կապիտալի աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, պայմանավորված է չբաշխված շահույթի ավելացմամբ՝ 653,373 հազ. ՀՀ դրամ կամ 59.0%:

31.12.09թ. համեմատ, Բանկի ընդհանուր կապիտալի աճը նույնպես պայմանավորված է չբաշխված շահույթի ավելացմամբ՝ 303,954 հազ. ՀՀ դրամ կամ 20.9%:

Եկամուտներ և ծախսեր

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի տոկոսային և նմանատիպ եկամուտներն աճել են 309,595 հազ. ՀՀ դրամով կամ 60.6%-ով՝ կազմելով 820,616 հազ. ՀՀ դրամ:

Բանկի տոկոսային եկամուտների գերակշռող մասը բաժին է ընկնում վարկային ներդրումներից ստացված եկամուտներին (666,551 հազ. ՀՀ դրամ կամ 81.2%) և արժեթղթերից ստացված եկամուտներին (55,165 հազ. ՀՀ դրամ կամ 6.7%):

Հաշվետու եռամսյակում, Բանկի եկամուտների կազմում կոմիսիոն և այլ վճարումներից զուտ եկամուտները կազմել են 66,528 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 26,932 հազ. ՀՀ դրամով կամ 68.0%-ով:

Արտարժութային գործառնություններից ստացված զուտ շահույթն աճել է 32,474 հազ. ՀՀ դրամով կամ 66.6%-ով՝ կազմելով 81,222 հազ. ՀՀ դրամ:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է հաշվետու եռամսյակի և նախորդ երկու տարվա նույն ժամանակահատվածի Բանկի եկամուտների և ծախսերի կառուցվածքը:

հազ. ՀՀ դրամ	2008թ. 1-ին եռամսյակի համար	2009թ 1-ին եռամսյակի համար	2010թ 1-ին եռամսյակի համար
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	448,357	511,021	820,616
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(154,930)	(245,332)	(337,963)
Զուտ տոկոսային եկամուտ	**293,427**	**265,689**	**482,653**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	50,627	71,598	95,304
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(25,468)	(32,002)	(28,776)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ	**25,159**	**39,596**	**66,528**
Արտարժութային գործառնություններից զուտ շահույթ/ (վնաս)	97,361	48,748	81,222
Վաճառքի նպատակով պահվող ներդրումներից զուտ շահույթ/ (վնաս)	22,268	17,809	93,748
Այլ եկամուտ	19,969	15,396	12,675
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	(19,074)	(10,909)	(39,046)
Անձնակազմի գծով ծախսեր	(113,472)	(167,612)	(185,924)
Հիմնական միջոցների մաշվածություն	(23,243)	(37,634)	(44,051)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	(1,901)	(1,964)	(2,092)
Այլ ծախսեր	(110,045)	(176,641)	(120,203)
Շահույթ/(վնաս) հարկումից առաջ	**190,449**	**(7,522)**	**345,510**
Շահութահարկի գծով ծախս	**(11,904)**	**(6,481)**	**(41,556)**
Շահույթ հարկումից հետո	**178,545**	**(14,003)**	**303,954**

Հաշվետու եռամսյակում Բանկի տոկոսային և նմանատիպ ծախսերը կազմել են 337,963 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 92,631 հազ. ՀՀ դրամով կամ 37.8%-ով: Ծախսերի զգալի մասը բաժին է ընկնում հաճախորդների հաշիվների դիմաց վճարված

տոկոսային ծախսերին, որը կազմել է 282,178 հազ. ՀՀ դրամ:

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի անձնակազմի գծով ծախսերն աճել են 18,312 հազ. ՀՀ դրամով կամ 10.9%-ով՝ կազմելով 185,924 հազ. ՀՀ դրամ, հիմնական միջոցների մաշվածության ծախսերն աճել են 6,417 հազ. ՀՀ դրամով կամ 17.1%-ով՝ կազմելով 44,051 հազ. ՀՀ դրամ, ոչ նյութական ակտիվների մաշվածության ծախսերը՝ 128 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 2,092 հազ. ՀՀ դրամ:

Շահույթ, շահութաբերություն և շահաբաժիններ

Հաշվետու եռամսյակի արդյունքներով, Բանկը ձևավորել է 303,954 հազ. ՀՀ դրամի շահույթ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 14,003 հազ. ՀՀ դրամ վնասի դիմաց:

Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները կազմել են՝
ROE (կապիտալի շահութաբերություն)՝ 3.9%,
ROA (ակտիվների շահութաբերություն)՝ 0.6%:

Հաշվետու եռամսյակի 303,954 հազ. ՀՀ դրամ շահույթի ձևավորման արդյունքում մեկ բաժնետոմսին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) կազմել 283 ՀՀ դրամ շահույթ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 13 դրամ վնաս մեկ բաժնետոմսի դիմաց:

Ծառայություններ և հաճախորդներ

Հաշվետու եռամսյակում Բանկի վճարահաշվարկային գործառնությունների ծավալների աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, որն իր արդյունքներով արտացոլվում է կոմիսիոն և այլ եկամուտների տեսքով ստացված եկամուտներում, կազմել է 23,706 հազ. ՀՀ դրամ կամ 33.1%:

Վճարահաշվարկային գործառնությունների ծավալային աճ ապահովող ծառայություններից է հանդիսանում կոմունալ վճարումների հավաքագրումը, որը նախորդ տարվա նույն ժամակահատվածի համեմատ, աճել է 200,055 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 782,853 հազ. դրամ:

2010 թվականի մարտի 31-ի դրությամբ Բանկի ակտիվ հաճախորդների թվաքանակը կազմել է 47,345, որը 2009 թ. մարտի 31-ի համեմատ աճել է 18,156-ով:

Վճարահաշվարկային գործառնություններ

Չեկեր

Հաշվետու միջանկյալ ժամանակահատվածում Բանկը շարունակել է իրականացնել չեկերի տրամադրման և սպասարկման գործառնությունները: Հաշվետու ժամանակաշրջանում Բանկն ակտիվ համագործակցել է American Express TC ընկերության հետ և տրամադրել է 52 հատ ճանապարհային և բանկային չեկեր:

Ակրեդիտիվներ

Հաշվետու եռամսյակի ընթացքում Բանկը սպասարկել է 298,000 ԱՄՆ դոլար գումարով ակրեդիտիվներ:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում Բանկը թողարկել էր 212,800 ԱՄՆ դոլար և 407,400 Եվրո ընդհանուր գումարով ակրեդիտիվներ, որոնցից 407,400 Եվրո տրամադրվել է EBRD-ի հետ իրականացվող առևտրի խթանման ծրագրի շրջանակներում:

Միջազգային դրամական փոխանցումներ

Հաշվետու եռամսյակում միջազգային դրամական փոխանցումների համակարգով փոխանցումների ծավալը կազմել է 28,916,945 հազ. ՀՀ դրամին համարժեք գումար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 22,335,459 հազ. ՀՀ դրամին համարժեք գումարի դիմաց:

Պլաստիկ քարտեր

Հաշվետու եռամսյակում Բանկի ակտիվ գործող պլաստիկ քարտերի թիվն աճել է 3,417 հատով, որից 1,878-ը բաժին է ընկնում ArCa վճարային քարտերին, իսկ 1,539-ը՝ MasterCard միջազգային պլաստիկ քարտերին: Հաշվետու եռամսյակի ավարտին պլաստիկ քարտերի քանակը կազմել է 41,557 հատ:

Ամփոփ ֆինանսական տվյալներ

Հազ, ՀՀ դրամ

Ցուցանիշի անվանումը	2008 թվ., 1 եռ.	2009 թվ., 1 եռ.	2010 թվ., 1 եռ.
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	178,545	(14,003)	303,954
Սեփական կապիտալի միջին մեծություն	4,763,887	7,520,495	7,873,471
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	3.75%	-0.19%	3.9%
Զուտշահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	178,545	(14,003)	303,954
Ընհանուր ակտիվների միջին մեծություն	28,098,823	29,989,954	48,172,930
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	0.64%	-0.05%	0.6%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	178,545	(14,003)	303,954
Գործառնական եկամուտ	483,652	419,240	736,826
Զուտ շահույթի մարժա (NPM), %	36.92%	-3.34%	41.3%
Գործառնական եկամուտ	483,652	419,240	736,826
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	28,098,823	29,989,954	48,172,930
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	1.72%	1.40%	1.5%
Ընհանուր ակտիվների միջին մեծություն	28,098,823	29,989,954	48,172,930
Սեփական կապիտալի միջին մեծություն	4,763,887	7,520,495	7,873,471
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	5.90	3.99	6.1
Զուտ տոկոսային եկամուտ	293,427	265,689	482,653
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	19,377,521	17,553,835	29,668,021
Զուտ տոկոսային մարժա (NIM)	1.51%	1.51%	1.63%
Տոկոսային եկամուտ	448,357	511,021	820,616
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	19,377,521	17,553,835	29,668,021
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն	2.31%	2.91%	2.77%
Տոկոսային ծախսեր	154,930	245,332	337,963
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են	8,210,689	12,037,820	24,538,105

տոկոսային ծախսեր			
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	1.89%	2.04%	1.38%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	178,545	(14,003)	303,954
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը, հազ. հատ	774	1,072	1,072
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS), հազ. ՀՀ դրամ	0.23	(0.01)	0. 28
Սպրեդ	0.43%	0.87%	1.39%

Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար

Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար Բանկի հետագա զարգացման խնդիրները և նպատակները պայմանավորված են Բանկի հեռանկարային զարգացման ծրագրով և Բանկի տարեկան բյուջեով սահմանված նպատակային թիրախներով և չափանիշներով և դիտարկվում են հետևյալ ցուցանիշների աճի մակարդակներով.

- Բանկի ընդհանուր ակտիվների մնացորդների շարունակական աճի ապահովում՝ հիմնականում վարկային ներդրումների աճի հաշվին,
- ժամկետային ավանդների մնացորդների և ցպահանջ ավանդների մնացորդների աճի ապահովում,
- Բանկի հաճախորդների թվի շարունակական աճի, ինչպես նաև սպասարկման որակի բարձրացման արդյունքում նախատեսվում է ստացվելիք կոմիսիոն գումարների աճ,
- վճարահաշվարկային ծառայությունների, այդ թվում՝ պլաստիկ քարտերով գործառնությունների ծավալման նպատակով նախատեսվում է ընդլայնել համագործակցող կազմակերպությունների շրջանակները, ավելացնել Բանկի քարտապանների թիվը, որի ապահովման նպատակով կավելացվի նաև ATM-երի թիվը և տեղաբաշխվածության մակարդակը,
- նոր մասնաճյուղերի ստեղծում ՀՀ այն տարածաշրջաններում, որտեղ Բանկի մասնաճյուղերի ստեղծումը համարվում է ռազմավարական նշանակություն ունեցող և Բանկի զարգացման համար անհրաժեշտ քայլ,
- եկամտաբեր ակտիվների ծավալների աճի հաշվին տոկոսային եկամուտների աճ,
- Բանկի կողմից միջնորդական և վճարահաշվարկային ծառայությունների աճի հաշվին ոչ տոկոսային եկամուտների աճ,
- վերը բերված ցուցանիշների աճի դեպքում կարձանագրվի նաև զուտ շահույթի աճ:

Միջանկյալ հաշվետվություն ֆինանսական դրության մասին

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, ք.Երևան,Պուշկինի 19

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթա-գրություններ	31.03.2010թ.-ի դրությամբ (չստուգված)	31.12.2009թ.-ի դրությամբ (ստուգված)
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	14	12,735,885	16,268,959
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	15	4,970,375	4,721,252
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	16	18,871,838	16,096,190
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	17	2,904,538	4,923,181
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	26	-	-
Հիմնական միջոցներ	18	1,362,634	1,153,515
Ոչ նյութական ակտիվներ	19	50,302	46,407
Հետաձգված հարկային ակտիվներ	12	14,447	-
Վաճառքի համար պահվող ակտիվներ	20	45,448	45,448
Այլ ակտիվներ	21	194,274	211,057
Ընդամենը՝ ակտիվներ		41,149,741	43,466,009
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	22	7,106,121	9,412,771
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	23	25,382,718	25,725,656
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	24	250,411	250,205
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		-	-
Հետաձգված հարկային պարտավորություններ	12	-	6,172
Այլ պարտավորություններ	25	228,692	122,219
Ընդամենը՝ պարտավորություններ		32,967,942	35,517,023
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	27	5,362,005	5,362,005
Էմիսիոն եկամուտ		766,001	766,001
Գլխավոր պահուստ		300,000	300,000
Այլ պահուստներ		(6,441)	64,700
Չբաշխված շահույթ (վնաս)		1,760,234	1,456,280
Ընդամենը՝ կապիտալ		8,181,799	7,948,986
Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		41,149,741	43,466,009

Բանկի Վարչության նախագահ _____ Ա.ՕՍԻՊՅԱՆ

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ _____ Տ.ԳԱԼՍՏՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.04.2010թ

Միջանկյալ հաշվետվություն ֆինանսական արդյունքների մասին

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ք.Երևան, Պուշկինի 19

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթա-գրություններ	01.01.10թ.-ից - 31.03.10թ. ժամանակաշրջանի համար (չստուգված)	31.03.2010թ-ի երեք ամիսների համար (չստուգված)	01.01.09թ.-ից - 31.03.09թ. ժամանակաշրջանի համար (չստուգված)	31.03.2009թ-ի երեք ամիսների համար (չստուգված)
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	6	820,616	820,616	511,021	511,021
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	6	(337,963)	(337,963)	(245,332)	(245,332)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		482,653	482,653	265,689	265,689
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	95,304	95,304	71,598	71,598
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	7	(28,776)	(28,776)	(32,002)	(32,002)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		66,528	66,528	39,596	39,596
Արտարժույթային գործարքներից զուտ շահույթ		81,222	81,222	48,748	48,748
Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ եկամուտ		93,748	93,748	17,809	17,809
Այլ եկամուտներ	8	12,675	12,675	15,396	15,396
Զուտ մասհանումներ ակտիվների ենթարավոր կորուստների պահուստներին	9	(39,046)	(39,046)	(10,909)	(10,909)
Անձնակազմի գծով ծախս	10	(185,924)	(185,924)	(167,612)	(167,612)
Հիմնական միջոցների մաշվածություն	18	(44,051)	(44,051)	(37,634)	(37,634)
Ոչ նյութական ակտիվների մաշվածություն	19	(2,092)	(2,092)	(1,964)	(1,964)
Այլ ծախսեր	11	(120,203)	(120,203)	(176,641)	(176,641)
Շահույթը/ (վնասը) մինչև հարկումը		345,510	345,510	(7,522)	(7,522)
Շահութահարկի գծով ծախս	12	(41,556)	(41,556)	(6,481)	(6,481)
Շահույթը (վնասը) հարկումից հետո		303,954	303,954	(14,003)	(14,003)
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ		0.28	0.28	(0.01)	(0.01)

Բանկի Վարչության նախագահ _____ Ա.ՕՍԻՊՅԱՆ

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ _____ Տ.ԳԱԼՍՏՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.04.2010թ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, ք.Երևան, Պուշկինի 19

(հազար դրամ)

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ/վնաս	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատումից պահուստներ*	Հիմնական միջոցների գծով վերագնահատումից պահուստներ*	Չբաշխված շահույթ/վնաս	Ընդամենը
Հոդվածներ	1	2	3	4	5	6	7
Նախորդ հաշվետու ժամանակաշրջան (I աղյուսակ)							
1. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2009թ. (ստուգված)	5,362,005	766,001	270,000	25,732	-	1,120,864	7,544,602
3. Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ և ծախսեր, այդ թվում՝	-	-	-	101,076	-	-	101,076
4. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	-	-	-	-	-	-	-
4.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	-	-	-	-	-	-	-
5. Նախորդ տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ (վնաս)	-	-	-	-	-	-14,003	-14,003
6. Բաշխված շահութաբաժիններ	-	-	-	-	-	-	-
7. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝	-	-	-	-	-	-	-
8. Ներքին շարժեր, այդ թվում՝	-	-	-	-	-	-	-
8.1. Մասհանումներ գլխավոր պահուստին	-	-	-	-	-	-	-
9. Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում առ 31 մարտի 2009թ. (չստուգված)	5,362,005	766,001	270,000	126,808	-	1,106,861	7,631,675

Հաշվետու ժամանակաշրջան (II աղյուսակ)							
1. Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2010թ. (ստուգված)	5,362,005	766,001	300,000	64,700	-	1,456,280	7,948,986
10.Վերահաշվարկված մնացորդը	5,362,005	766,001	300,000	64,700	-	1,456,280	7,948,986
11. Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ և ծախսեր, այդ թվում՝	-	-	-	(71,141)	-	-	(71,141)
11.1 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատման պահուստների աճ կամ նվազում	-	-	-	-	-	-	-
11.2.Վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ	-	-	-	(54,517)	-	-	(54,517)
11.3.Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆինանսական արդյունքին փոխանցված զուտ օգուտ	-	-	-	(16,624)	-	-	(16,624)
12. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	-	-	-	-	-	-	-
12.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում	-	-	-	-	-	-	-
Դուստր ընկերության չբաշխված շահույթ (վնաս)							-
13. Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ (վնաս)	-	-	-	-	-	303,954	303,954
14. Բաշխված շահութաբաժիններ	-	-	-	-	-	-	-
15. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝	-	-	-	-	-	-	-
16. Ներքին շարժեր, այդ թվում՝	-	-	-	-	-	-	-
16.1. Մասհանումներ գլխավոր պահուստին	-	-	-	-	-	-	-
17. Մնացորդը հաշվետու ժամանակշրջանի վերջում առ 31 մարտի 2010թ. (չստուգված)	5,362,005	766,001	300,000	(6,441)	-	1,760,234	8,181,799

Բանկի Վարչության նախագահ ԼՈՍԻՊՅԱՆ

Կ.Տ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
ARARATBANK
02500518

Գլխավոր հաշվապահ Տ.ԳԵՂԱՍՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.04.2010թ

Միջանկյալ հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Ք.Երևան, Պուշկինի 19

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություն	31.03.2010թ-ին ավարտված երեք ամիսների համար (չստուգված)	31.03.2009թ-ին ավարտված երեք ամիսների համար (չստուգված)
1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		x	x
Շահույթ մինչև հարկումը		345,510	-7,522
Ճշտումներ		-	-
Ակտիվների հնարավոր կորուստների արժեզրկման ծախս		39,046	10,909
Մաշվածություն և ամորտիզացիոն ծախսումներ		46,143	39,598
Հիմնական միջոցների վաճառքից շահույթ		-2,187	-698
Ստացվելիք տոկոսներ		27,441	-18,451
Վճարվելիք տոկոսներ		108,988	70,252
Ոչ առևտրային ակտիվների արտարժութային փոխարկումներից զուտ վնաս		-24,539	55,120
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		540,402	149,208
Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում)			
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում		388,991	120,025
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		-103,936	243,703
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ		-2,768,776	1,044,750
Այլ ակտիվներ		-211,162	-62,099
Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		-2,386,187	278,102
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ		-450,741	-5,340,684
Այլ պարտավորություններ		68,970	-215,474
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը		-4,922,439	-3,782,469
Վճարված շահութահարկ		-41,556	-32,000
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		-4,963,995	-3,814,469
2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		x	x
Այլ բանկերում տեղաբաշխված ավանդների նվազում (ավելացում)			
Ներդրումային արժեթղթերի առք/վաճառք և իրացում		-48,658	232,828
Հիմնական միջոցների առք		-255,325	-19,901
Հիմնական միջոցների վաճառք		4,374	1,396
Ոչ նյութական ակտիվների առք ու վաճառք		-5,988	-
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից		2,012,779	-
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		1,707,182	214,323
3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում		-	-
Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)		-	-
Բանկերից և ֆինանսական կազմակերպություններից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		179,377	1,125,290
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից		26,000	300,000
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		205,377	1,425,290
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		-3,051,436	-2,174,856
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ		16,149,729	11,039,386
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների		-193,051	1,675,706
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ		12,905,243	10,540,236

Բանկի Վարչության նախագահ _____ Ա.ՕՍԻՊՅԱՆ

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ _____ Տ.ԳԱԼՍՏՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.04.2010թ